Արձանագրություն N 3

N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան-ի կարիքների համար Աշտարակ քաղաքի մուտքի հանգույցի բարեկարգման շինարարական աշխատանքների ձեռքբերման ԳՀ ընթացակարգի հայտերի գնապատող հանձնաժողովի Հայտերի գնահատման նիստի

ք. Աշտարակ 20.06. 2018թ.

Ժամը՝ 15.00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Գ.Եղիազարյան

- ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյան
- ԳՊ/ԳԱ՝ Մ.Փարվանյան
- ԳՊ/ԲԱ՝ Ա.Գրիգորյան
- ԳՊ/ԲԱ՝ Վ. Վարդանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀմ՝ Հ. Հակոբյան

1. Ընդունվել է Ի գիտություն,որ

Առաջին տեղը զբաղեցրած մասնակից «ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ - ն, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չի ներկայացրել :

Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

2.ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն:

3. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները /ըստ գնահատման թերթիկների/ «ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ - ի համար

ա) ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը գնահատվել է անբավարար,

բ) Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար,

գ) Տեխնիկական միջոցների համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար,

դ) Աշխատանքային ռեսուրսների համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ–ն սահմանված ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չի ներկայացրել և ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված 18.06.2018թ.-ի պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը այն մասին, որ հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը եղել է 0 (զրո), «ՊՐԻՄԴԻՓ» ՍՊԸ –ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ - 0:

4. N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

4.1 N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/7 ծածկագրով ընթացակարգի

Չափաբաժին 1

- 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ –ն,որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից :
- 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում ՀԻԴՐՈՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ ՍՊԸ –ն

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

5.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրումից և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերն ուղարկելուց հետո, ոչ ուշ, քան գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի անդամների անունները

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Գ.Եղիազարյան

- ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյան
- ԳՊ/ԳԱ՝ Մ.Փարվանյան
- ԳՊ/ԲԱ՝ Ա.Գրիգորյան
- ԳՊ/ԲԱ՝ Վ. Վարդանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան